
ՀՅ ԱՐՏՎԹԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՏՆՏԵՍԱՉԱՓԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՀԱՄԱՐԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ԽԱՌԱՏՅԱՆ, ՄԱՆՈՒԺԱԿ ՎԱՅՐԱՄՅԱՆ, ԱՐԵՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ներածություն: Հայաստանի զարգացման համար կարևոր է ինտեգրումը համաշխարհային տնտեսությամբ: Այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերից էր Առևտրի համաշխարհային կազմակերպությանն (ԱՀԿ) անդամակցելը 2003 թ. փետրվարին:

Մի շարք տնտեսագետներ ուսումնասիրել են միջազգային առևտրի ազդեցությունը երկրի զարգացման և բնակչության կենսամակարդակի վրա: Այդ աշխատանքների գերակշիռ մասը տեսական բնույթի է, դրանցում տարբեր երկրների օրինակով մշակվել են մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և արտահանման միջև եղած քանակական կապերը¹:

Գոյություն ունեցող հետազոտություններում բացակայում են արտահանման և ՀՆԱ-ի դեֆյատորի, գուտ ընթացիկ տրանսֆերտների, ԱՊՀ և այլ երկրների արդյունաբերական ապրանքների արտահանման, ներկրման, փոխարժեքի, առևտրային հաշվեկշռի և ընթացիկ հաշվի միջև գոյություն ունեցող քանակական գնահատականներն արտահայտող տնտեսամաթեմատիկական մոդելները:

Սույն հոդվածի նպատակն է.

- Վերլուծել ՀՅ միջազգային առևտրատնտեսական կապերը մինչև ԱՀԿ-ին անդամակցելը և դրանից հետո,
- առաջարկել երկրի տնտեսության վրա միջազգային առևտրի ազդեցության քանակական գնահատման գործիքային միջոցներ,
- տնտեսամաթեմատիկական մոդելի կիրառմամբ վերլուծել ՀՅ ԱՀԿ-ին անդամակցության արդյունքները:

ՀՅ միջազգային առևտրատնտեսական կապերը մինչև ԱՀԿ-ին անդամակցելը և դրանից հետո: Հայաստանն այսօր առևտուր է անում 108 երկրի հետ, ազատ առևտրի ռեժիմ ունի Վրաստանի, Ռուսաստանի,

¹ Տե՛ս, օդինակ՝ **Mikhail M.** Exports and Growth: An Empirical Investigation. Journal of Development Economics, March 1977, 4(1), էջ 49-53, **Gershon F.** On Exports and Economic Growth. Journal of Development Economics, February-April 1983, 12(1-2), էջ 59-73, **Kormendi R. G., Meguire P. G.** Macroeconomic Determinants of Growth: Cross-Country Evidence. Journal Monetary Economics, September 1985, 16(2), էջ 141-163, **Fisher S.** Growth, Macroeconomics, and Development, in Oliver Jean Blanchard and Stenly Fisher, eds., NBER macroeconomics annual 1991. Cambridge, MA: MIT Press, 1991, էջ 329-364, **Dollar D.** Quotward-Oriented Developing Economics Really Do Grow More Rapidly: Evidence from 95 LDCs, 1976-1985. Economic Development and Cultural Change, April 1992, 40(3), էջ 523-544, **Levine R., Renelt D.** A Sensitivity Analysis of Cross-Country Growth Regressions. American Economic Review, September 1992, 82(4), էջ 942-963, **Edwards S.** Openness, Trade Liberalization, and Growth in Developing Countries. Journal of Economic Literature, September 1993, 31(3), էջ 1358-1393:

Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Թուրքմենիայի հետ: Այս երկրների և Յայաստանի միջև վաճառվող ապրանքների համար գործում են տարիֆային արտոնություններ:

ՀՀ-ի հետ հարևան երկրներից ապրանքաշրջանառության առաջատարն Իրանն է, երկրորդը՝ Թուրքիան, երրորդը՝ Վրաստանը: 1996 թ. ՀՀ ներմուծման տեսակարար կշռով Իրանը գրավում էր առաջին, իսկ արտահանման տեսակարար կշռով՝ երրորդ տեղը: ԱՐԿ անդամակցությունից հետո Իրանի հետ ապրանքաշրջանառությունը կրծատվել է՝ հիմնականում պայմանավորված արտահանման նվազմամբ: Դա կարելի է բացատրել ԱՐԿ անդամակցության շնորհիվ Յայաստանի համար արտահանման ավելի գերադասելի պայմաններով նոր շուկաների հնարավորությամբ:

Այսօր ՀՀ մեծ քանակությամբ ապրանքներ են ներմուծվում Թուրքիայից: Բավական է նշել, որ եթե 1996 թ. ՀՀ ներմուծման տեսակարար կշռով Թուրքիան գրավում էր 17-րդ տեղը, 2003 թ.՝ 11-րդ, ապա 2009 թ.՝ արդեն 4-րդ տեղը:

ՀՀ-ից Վրաստան արտահանումը ԱՐԿ անդամակցությունից հետո սկսեց կտրուկ ավելանալ՝ 2003 թ. 2,7 տոկոսից 2009 թ. հասնելով 7,4 տոկոսի: Այդ ժամանակահատվածում ներմուծումն աճել է ավելի համեստ տեմպերով: Յարևան երկրներից ՀՀ-ն դրական առևտրային հաշվեկշիռ ունի միայն Վրաստանի հետ:

ԱՊՀ երկրների շարքում, Վրաստանից բացի, ՀՀ առևտրային հարաբերություններն առավել ակտիվ են Ռուսաստանի, Բելառուսի և Ուկրաինայի հետ: ՀՀ ներմուծման ու արտահանման տեսակարար կշիռներով ՈԴ-ն գրեթե միշտ եղել է առաջին տեղում: 2009 թ. ՀՀ արտահանման տեսակարար կշռով ՈԴ-ն գրավել է երկրորդ տեղը. առաջատարն էր Գերմանիան: ԱՊՀ մյուս երկրների հետ Յայաստանի առևտրային հարաբերությունները հիմնականում ներմուծման ուղղությամբ են: ԱՊՀ երկրներից, Վրաստանից բացի, ՀՀ-ն առևտրային դրական հաշվեկշիռ ունի նաև Տաջիկստանի հետ²:

ԱՐԿ անդամակցությունից հետո ՀՀ-ի համար ավելի բարենպաստ շուկաներ ի հայտ եկան, որի շնորհիվ Յայաստանի առևտրաշրջանառության աշխարհագրությունն աստիճանաբար տեղաշարժվում է դեպի Եվրոպա, ԱՄՆ և այլն: Զգալիորեն ավելացել է Յայաստանի արտահանումը Եվրոպա, հատկապես Բելգիա, Շվեյցարիա, Գերմանիա և Լիդերլանդներ: Նկատելիորեն աճել է ՀՀ-ից արտահանումը Իսրայել: Նիդերլանդների հետ արտաքին առևտրում Յայաստանն ունի դրական հաշվեկշիռ:

ԱՐԿ անդամակցության տարում գրանցվեց ներմուծման աննախաղեա աճ: Նախորդ տարվա համեմատ ներմուծումն աճեց 252,3 մլն ԱՄՆ դոլարով (72 տոկոսով): Յարև է նշել, որ ոչ աղամանդային ներմուծման աճը (15,4 տոկոս) ապահովվեց ի հաշիվ արտադրության միջոցների ներմուծման, որն ընդհանուր առնանք դրական զարգացում է: Մյուս կողմից, հենց 2003 թ. նախորդ տարվա համեմատ արտահանման աճ է դիտվել, որը հետագայում կայունացել է: 2009 թ. գրանցվել է արտահանման անկում՝ պայմանավորված ֆինանսատեսական ճգնաժամով: 2010 թ. նախորդ տարվա համեմատ ՀՀ ներմուծումը աճել է 13,9 տոկոսով, իսկ ար-


²Տես «Յայաստանի վիճակագրական տարեգիրք 2010», Եր., 2010, էջ 454, 485-488:

տահանումն աճել է 41,3 տոկոսով՝ հասնելով 1011,4 մլն դրամի: Հարկ է նշել, որ գումավոր մետաղների հանքաքարի միջազգային գները 2010 թ. աճել են մոտ 2,5 անգամ³:

2010 թ. ներմուծումը 3,74 անգամ գերազանցել է արտահանումը՝ կազմելով 3782,9 մլն դրամ: 2010 թ. ՀՀ արտաքին ապրանքաշոշանառությունը կազմել է 4794,3 մլն դրամ: Այն նախորդ տարվա համենատուրյամբ աճել է 18,9 տոկոսով: Համաշխարհային պրակտիկայում երկրի տնտեսության բնականոն զարգացման և անվտանգության համար ընդունելի է համարվում ներմուծում / ապրանքաշոշանառություն հարաբերության 25-30 % մակարդակը, մինչդեռ ՀՀ-ում 2007 թ. այն կազմել է շուրջ 74 %, իսկ 2010 թ.⁴՝ 78,9 %:

Գծապատկեր 1

ՀՀ արտահանման և ներմուծման դինամիկան 1997-2010 թթ⁴.



ԱՐԿ անդամակցությունից հետո առևտրային հաշվեկշռի բացասական սալիկն ավելի աճեց (տես գծապատկեր 1), ուստի կարելի է փաստել, որ կարճաժամկետ հատվածում ԱՐԿ անդամակցությունը դրական ազդեցություն չի ունեցել առևտրային հաշվեկշռի վրա:

ՀՀ միջազգային առևտրի տնտեսամաթեմատիկական մոդելներ: 1996-2010 թթ. եռամյակային կտրվածքով ՀՀ վիճակագրական տվյալների հիման վրա EViews և SPSS ծրագրային փաթեթների կիրառմամբ մեր կողմից մշակվել են տնտեսամաթեմատիկական մոդելներ: Մեր մոտեցումը հիմնված է ՀՀ միջազգային առևտրի ռեգրեսիոն մոդելների և ARIMA մոդելի վրա: Մոդելներում կատարվել են հետևյալ նշանակումները. GDP՝ անվանական ՀՆՍ (մլն դրամ), DEF՝ ՀՆՍ դեֆլյատոր, TR՝ զուտ ընթացիկ տրանսֆերտներ արտասահմանից (մլն դրամ), EX՝ արտահանում (մլն դրամ), CIS՝ արդյունաբերական ապրանքների արտահանում ԱՊՀ երկրներ (մլն դրամ), NCIS՝ արդյունաբերական ապրանքների արտահանում այլ

³ Տե՛ս armstat. Info/am/nid=126&thid=gend&submit.

⁴ Տե՛ս նույն տեղը:

Երկրներ (մլն դոլար), IM` ներմուծում (մլն դոլար), ER` փոխարժեք, BOP` առևտրային հաշվեկշիռ, YNT` ընթացիկ հաշիվ:

Անվանական ՀՆԱ, զուտ ընթացիկ տրանսֆերտներ արտասահմանից, արտահանում, արդյունաբերական ապրանքների արտահանում ԱՊՀ երկրներ, արդյունաբերական ապրանքների արտահանում այլ երկրներ, ներմուծում և առևտրային հաշվեկշիռ ցուցանիշները դիմամիկայում դրսևորել են սեզոնայնություն, ուստի նախապես հարթեցվել են Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրի միջոցով: Ոեգրեսիոն մոդելներում կիրառվել են արտահանում, փոխարժեք, ներմուծում փոփոխականների լոգարիթմները: Դիկի-Ֆուլերի թեստի միջոցով ստուգվել է դիտարկված բոլոր փոփոխականների ստացիոնարությունը: Ստացիոնարությունը ապահովելու նպատակով դրանց մի մասի համար դիտարկվել են առաջին կամ երկրորդ կարգի տարբերությունները:

Մոդել 1

Dependent Variable: LOGHPEX

Method: Least Squares

Sample (adjusted): 1999Q1 2010Q4

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	12.31316	0.025586	481.2478	0.0000
D(HPTR)	-1.41E-05	5.08E-06	-2.765844	0.0132
D(HPGDP)	7.79E-06	1.42E-06	5.503747	0.0000
HPYNT	0.026643	0.000456	58.45702	0.0000
D(HPTCIS)	0.000248	2.78E-05	8.911782	0.0000
R-squared	0.999986	Mean dependent var	11.11320	
Adjusted R-squared	0.999983	S.D. dependent var	0.288762	
S.E. of regression	0.001207	Akaike info criterion	-10.40542	
Sum squared resid	2.47E-05	Schwarz criterion	-10.15746	
Log likelihood	119.4597	Hannan-Quinn criter.	-10.34701	
F-statistic	300717.6	Durbin-Watson stat	1.034917	
Prob(F-statistic)	0.000000			

Հետազոտությունը ցույց է տվել, որ անվանական ՀՆԱ-ն, ընթացիկ հաշիվը և ԱՊՀ երկրներ արդյունաբերական ապրանքների արտահանումը ունեն դրական կոռելյացիոն կապ արտահանման հետ: Մոդելում ներառված բոլոր բացատրող փոփոխականների ազդեցությունները արտահանման վրա նշանակալի են: Արտասահմանց ստացվող տրանսֆերտները Հայաստանում հիմնականում օգտագործվում են սպառողական նպատակներով: Ֆինանսական այդ հոսքերը ներդրումների փոխակերպվելու դեպքում մեծապես կարող են նպաստել ՀՀ արտահանման ծավալների աճին: Մոդելում արտասահմանյան տրանսֆերտների և արտահանման միջև կոռելյացիոն կապը հակադարձ է:

Մոդել 2

Dependent Variable: LOGHPEX
 Method: Least Squares
 Sample (adjusted): 1996Q1 2010Q4

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	10.76750	0.054917	196.0696	0.0000
D(LOGER)	-5.535038	1.295390	-4.272874	0.0001
D(DHPBOP)	-1.514851	0.231570	-6.541662	0.0000
R-squared	0.657376	Mean dependent var		10.99115
Adjusted R-squared	0.641440	S.D. dependent var		0.523881
S.E. of regression	0.313699	Akaike info criterion		0.582231
Sum squared resid	4.231515	Schwarz criterion		0.701490
Log likelihood	-10.39130	Hannan-Quinn criter.		0.626906
F-statistic	41.25098	Durbin-Watson stat		0.611978
Prob(F-statistic)	0.000000			

Մոդել 2-ի համաձայն՝ արտահանման վրա մեծ ազդեցություն ունի փոխարժեքը: Փոխարժեքը և ընթացիկ հաշիվ ցուցանիշներով բացատրվում է արտահանում փոփոխականի վարիացիայի 64,14 տոկոսը:

Մոդել 3

Dependent Variable: D(DHPLLOGIM)
 Method: Least Squares
 Date: 11/23/11 Time: 10:58
 Sample (adjusted): 1996Q3 2010Q4
 Included observations: 35 after adjustments

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	0.004029	0.000751	5.367944	0.0000
D(HPTR)	-5.18E-06	7.74E-07	-6.691210	0.0000
DEF	-4.63E-05	7.25E-06	-6.382513	0.0000
D(DHPBOP)	-0.007535	0.000815	-9.250891	0.0000
D(HPGDP)	3.72E-07	6.81E-08	5.464806	0.0000
R-squared	0.894796	Mean dependent var		0.000296
Adjusted R-squared	0.880769	S.D. dependent var		0.000713
S.E. of regression	0.000246	Akaike info criterion		-13.64873
Sum squared resid	1.82E-06	Schwarz criterion		-13.42654
Log likelihood	243.8528	Hannan-Quinn criter.		-13.57203
F-statistic	63.79000	Durbin-Watson stat		0.559290
Prob(F-statistic)	0.000000			

Մոդել 3-ում ներառված փոփոխականները 88,1 տոկոսով բացատրում են ներմուծման վարքը: Տրանսֆերտների ներհոսքը երկիր մեծացնում է ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան ապրանքներ գնելու հնարավորությունները: Մոդելում տրանսֆերտներ և ներմուծում փոփոխականների հակադարձ կապը պայմանավորված է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով դրամական փոխանցումների անկ-

մամբ: ՀՆԱ դեֆյատորի կապը ներմուծման հետ բացասական է: ՀՆԱ դեֆյատորի աճը վկայում է գնաճի մասին, իսկ երբ գներն աճում են, տնային տնտեսությունների իրական եկամուտները կրճատվում են, հետևաբար, նրանք սպառում են ավելի քիչ թե՛ ներքին, թե՛ ներմուծվող արտադրանք: Առկա է հակադարձ կապ նաև առևտրային հաշվեկշռի հետ. առևտրային հաշվեկշռի սալիոյի աճը այլ գործոնների անփոփոխ մնալու դեպքում նշանակում է ներմուծման կրճատում:

Մոդել 4

$$IM = 202.18 * GDP^{0.52} * \varepsilon$$

$$t_0 = 11.679, t_1 = 2.100, R^2 = 0.74782, F = 136.407, \text{Pr } obF = 0.00000 :$$

Ներմուծում - ՀՆԱ կապը ոչ գծային է: Այդ կապը մեր կողմից հետազոտված տասը ոչ գծային ֆունկցիաներից ամենից լավ կարելի է ներկայացնել աստիճանային ֆունկցիայով: ՀՆԱ-ի աճը նշանակում է բնակչության եկամուտների աճ, որը հնարավորություն է տալիս մեծացնել ներմուծվող ապրանքների վրա կատարվող ծախսերը: Մոդել 4-ի համաձայն՝ ներմուծման առաջականության գնահատականն ըստ եկամտի 0,52 է: ՀՆԱ-ի մեկ տոկոս աճը ներմուծման վրա ազդող այլ գործոնների անփոփոխ մնալու պայմաններում հանգեցնում է ներմուծման 0,52 տոկոս աճի:

Մոդել 5

$$\Delta bop(t) = -1.905 - 0.055 * \Delta bop(t-1) - 0.491 * \Delta bop(t-2) - 0.505 * \Delta bop(t-3) - \\ - 0.25 * \Delta bop(t-4) + \varepsilon :$$

Մոդել 5-ը ARIMA (4,1,0) ավտոռեգրեսիոն սահող միջին գործընթաց է: Այն հնարավորություն է տալիս ուսումնասիրելու 2003 թ. փետրվարի 5-ին Հայաստանի՝ ԱՀԿ անդամակցության ազդեցությունը ՀՀ առևտրային հաշվեկշռի վրա: ԱՀԿ անդամակցության թվականը դիտելով իրու փոփոխական, ներմուծենք սամույ (կեղծ) փոփոխական: Օգտվելով step ֆունկցիայից՝ դիտարկենք երկու կեղծ փոփոխականով (step29 և step30) մոդել՝

$$\Delta bop(t) = -1.905 - 0.055 * \Delta bop(t-1) - 0.491 * \Delta bop(t-2) - 0.505 * \Delta bop(t-3) - \\ - 0.25 * \Delta bop(t-4) + 7.82 * \text{step29} - 21.42 * \text{step30} + \varepsilon :$$

Խոր բացատրող փոփոխականների գործակիցների գումարը ցույց է տալիս եօր-ի վրա ընդհանուր ազդեցությունը երկու եռամսյակների ընթացքում: Այն բացասական է (-13,59): Երկու գործակիցներն ել նշանակալի չեն, հետևաբար առաջին երկու եռամսյակում ԱՀԿ-ին անդամակցելու ազդեցությունը վերահսկել հնարավոր չէ: Կարճաժամկետ հատվածում դժվար է ճշշտ եզրակացությունների հանգել: Ներմուծելով ևս երկու կեղծ փոփոխական հաջորդ երկու եռամսյակների համար՝ կստանանք տարեկան ազդեցությունը.

$$\Delta bop(t) = -1.987 - 0.490 * \Delta bop(t-1) - 0.464 * \Delta bop(t-2) - 0.485 * \Delta bop(t-3) + \\ + 0.321 * \Delta bop(t-4) + 1.970 * \text{step29} - 34.224 * \text{step30} + 42.536 * \text{step31} - 7.672 * \text{step32} + \varepsilon :$$

Այս մոդելում արդեն ԱՀԿ-ին անդամակցելու մեջ ազդեցությունը զգացվում է երրորդ եռամսյակում, քանի որ նշանակալի է այդ եռամսյակի գործակիցը: Գումարային գործակիցը կազմում է 2,557, այսինքն՝ Երևա-րաժամկետ հատվածում դրական ազդեցությունը արդեն գերակշռում է:

Եղբակացություն: 2003 թ. փետրվարին ԱՀԿ անդամակցությունից հետո ՀՀ-ի համար ավելի բարենպաստ շուկաներ ի հայտ եկան, որի շնորհիվ Հայաստանի առևտրաշրջանառության աշխարհագրությունն ընդլայնվեց: Անդամակցությունը հնարավորություն է տալիս ազատ առևտրի շնորհիվ կրծատելու ծախսերը, ավելի մեծ ուշադրություն դարձնելու ապրանքների որակի վրա և տեղական ապրանքների մրցունակության աճի շնորհիվ խթանելու ՀՀ ապրանքների արտահանումը: Այնուհանդերձ, ԱՀԿ անդամակցությունից հետո ՀՀ ներմուծման աճի տեմպը գերազանցեց արտահանման աճը և առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն ավելի մեծացավ:

Մոդելներ 1-ում և 2-ում ներկայացված են մի շարք տնտեսական գործուների (ՏՆԱ, արտերկրից ստացվող տրամադրություններ, փոխարժեք, արդյունաբերական ապրանքների արտահանում ԱՊԴ երկրներ և այլն) ներգործության քանակական գնահատականները ՀՀ արտահանման վրա, իսկ մոդելներ 3-ում և 4-ում՝ ներկրման վրա: *Մոդելներում բացահայտված քանակական կապերը կարող են օգտակար լինել տնտեսական քաղաքականություն մշակելիս:*

ARIMA մոդելը հնարավորություն է տվել ուսումնասիրելու Հայաստանի ԱՀԿ անդամակցության ազդեցությունը ՀՀ առևտրային հաշվեկշռի վրա: Մոդելի արդյունքների համաձայն՝ ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը կարծ ժամանակահատվածում չի կարող հանգեցնել էական տեղաշրժերի Հայաստանի արտաքին առևտրային հոսքերում, մասնավորապես՝ արտահանման ծավալներում և կառուցվածքում: Սակայն Երևարաժամկետ հեռանկարում Հայաստանի գործարարներն ու արտահանողներն իհարկե կշահեն ԱՀԿ սկզբունքների կիրառման շնորհիվ:

Հարկ է նշել, որ ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը ՀՀ ներքին շուկայում կարծ ժամանակահատվածում չի ուժեղացնի օտարերկրյա մրցակցությունը՝ հաշվի առնելով այն հանգանքը, որ Հայաստանում արտաքին առևտրի ռեժիմն ի սկզբանե ազատական է եղել:

АЛВАРД ХАРАТЯН, МАНУШАК ВАГРАМЯН, АРЕВ АМБАРЦУМЯН –
Эконометрический анализ внешних торгово-экономических связей Республики Армения в контексте членства во Всемирной торговой организации. – В статье проанализировано влияние, которое с февраля 2003 г. оказывает на макроэкономическую ситуацию в Армении её членство во Всемирной торговой организации (ВТО). Рассмотрены как положительные, так и отрицательные результаты, полученные Арменией в силу торгово-экономических связей с её основными торговыми партнерами и обусловленные именно членством в ВТО.

Факторы, характеризующие торгово-экономические связи Армении, исследовались при помощи многомерных регрессионных моделей. Выявленные в этих

моделях количественные связи могут быть полезны при разработке экономической политики страны.

ALVARD KHARATYAN, MANUSHAK VAHRAMYAN, AREV HAMBARDZUMYAN – Armenian International Trade Econometric Analysis in the Context of Membership of World Trade Organization. – In the article the influence of the membership of World Trade Organization (WTO) on Armenia Economy since February 2003 is presented. The authors examine those positive and negative results, which Armenia has acquired in trade-economic relations with the major trading partners, is due to WTO membership.

The quantitative relations existing between factors describing trade-economic relations of RA was studied by means of multivariate regression models. The quantitative relationships revealed in models can be useful in the development of economic policy of RA.